



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ  
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ



«25» 06 2021թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0112-21

Ձեռնարկողը՝

Քաղաքացի՝ **Օ. Ախվերդյան**  
Բաղրամյան համայնք

**Գործունեությունը՝ Շինարարների փողոց 2/1 հասցում կառուցել գյուղատնտեսական մթերքների պահեստների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայր**  
Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք Շինարարների փողոց 2/1

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող



Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

թիվ ԲՓ 0 1 1 2 - 2 1

<25> 06 2021թ.

**Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Շինարարների փողոց 2/1 հասցում գյուղատնտեսական մթերքների պահեստների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

**Ներածական մաս.**

Ձեռնարկող՝	Օնիկ Ախվերդյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք

Քաղաքացի Օնիկ Ախվերդյանի կողմից ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսվում է Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Շինարարների փողոց 2/1 հասցեում կառուցել գյուղատնտեսական մթերքների պահեստներ:

Գործունեությունն իրականացվելու է Արմավիրի համայնքապետարանի կողմից տրամադրված 2021թ ապրիլի 8-ի N 115 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականներով ամրագրված՝ 0.4023հա, մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7-րդ կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Նախագծվող համալիրի համար տրամադրված հողամասը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևմտյան մասում, և իրենից ներկայացնում է ոչ կառուցապատված տարածք: Հողատարածքի տարածքում բնության և պատմամշակութային հուշարձանները, ծառաթփային բուսականությունը, ջրային ռեսուրսները բացակայում են:

Համաձայն նախնական գնահատման հայտի ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենային և պլեյստոցենային բազալըները երրորդական հասակի նստվածքային հաստաշերտերի վրա, և ծածկված են այլուժիալ-պրոյուժիալ-դեյուժիալային նստվածքներով: Հետազոտության տվյալների



համաձայն կառուցապատվող տարածքը բարենպաստ է շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

1. հողատարածքի ընդհանուր մակերես – 0.4023հա,
2. կառուցապատման մակերես – 1812 մ<sup>2</sup>
3. խճային հիմքով ճանապարհներ՝ – 581 մ<sup>2</sup>,
4. կանաչապատման մակերեսը՝ – 1630մ<sup>2</sup>:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում է կառուցել մեկ հարկանի շինություն: Հիմնական շինությունը մեկ հարկանի է՝ բարձրությունը՝ առավելագույն 7.2մ, 6.2մ և 2.4մ: Օբյեկտը ապահովված է միջանցիկ օդափոխությամբ: Տանիքը երկլանջ է, մետաղական հիմնակմախքով կազմակերպված ջրահեռացմամբ՝ դեպի սեփական տարածք. տանիքածածկը՝ պրոֆիլավոր ցինկապատ թիթեղ:

Պահեստային տարածքների ջրամատակարարումը և ջրահեռացումը, էլեկտրամատակարարումը շինարարության և շահագործման փուլերում իրականացվելու է համաձայն գործող պայմանագրի:

Տարածքում գազաֆիկացումը իրականացվելու է համաձայն պայմանագրի, պահեստի ջեռուցումը իրականացվելու է ջրաջեռուցիչ կաթսայով:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարական աշխատանքները տևելու են 24 ամիս, շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից, որի ընթացքում օգտագործվելու են մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ բետոնատար մեքենա, ավտոմոբիլային կռունկ, էքսկավատոր և այլն: Շինարարական հրապարակի մակերեսը կազմելու է 500մ<sup>2</sup>, որտեղ պահեստավորվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու են ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և այլն:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավեցման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (15 մարդ), ինչը կազմում է 237.6մ<sup>3</sup>/շին.ժամ: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերն ուղղորդվելու են պարզարան (25մ<sup>3</sup>), որտեղ կատարվելու է մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը բերվելու է պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն՝ տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

